## Լեռնային Ղարաբաղի Հանրապետության անշարժ գույքի շուկան 2013թ. 9 ամսում

*Հոդվածը ներկայացնում է ԼՂՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի կողմից իրականացված անշարժ գույքի շուկայի մոնիթորինգի /համակարգված դիտարկումներ/ աշխատանքների արդյունքները և նպատակ ունի քաղաքացիներին իրազեկ դարձնելու ԼՂՀ անշարժ գույքի շուկայի իրավիճակին: Հոդվածում ներկայացվող Ստեփանակերտ քաղաքում և հանրապետության շրջաններում անշարժ գույքի շուկայական գները ձևավորվել են կոմիտեի ստորաբաժանումների կողմից գրանցված առուվաճառքների գործարքների պայմանագրային գների, մեր կողմից կատարված հարցումների և ռիելթորական գործակալություններում առաջարկվող անշարժ գույքի գների վերլուծության արդյունքում:*

*2013թ. 9 ամսում կոմիտեի ստորաբաժանումների կողմից իրականացվել է 7105 միավոր անշարժ գույքի նկատմամբ իրավունքի պետական գրանցում, որը նախորդ տարվա նույն ժամանակաշրջանի համեմատ աճել է 8,2%-ով:*

Իրականացված գրանցումների ծավալներն ըստ Ստեփանակերտ քաղաքի և հանրապետության շրջանների ունեն հետևյալ բաշխվածությունը.




2012 և 2013թթ. 9 ամսում անշարժ գույքի նկատմամբ իրականացված իրավունքների պետական գրանցումների քանակական փոփոխություններն ըստ

Ստեփանակերտ քաղաքի և հանրապետության շրջանների ունեն հետևյալ բաշխվածությունը.

| | 2012թ 9 ամիս | փոփոխություն | 2013թ. 9 ամիս |
|---|---|---|---|
| **Ստեփանակերտ** | 3010 | 6,1% | 3194 |
| **Ասկերան** | 865 | -0,5% | 861 |
| **Մարտունի** | 961 | -17,8% | 790 |
| **Մարտակերտ** | 777 | 10,3% | 857 |
| **Հադրութ** | 367 | 34,3% | 493 |
| **Շուշի** | 255 | 23,1% | 314 |
| **Քաշաթաղ** | 320 | 64,1% | 525 |
| **Շահումյան** | 12 | 5,9 անգամ | 71 |
| **Հանրապետությու** | **6567** | **8,2%** | **7105** |

2012 և 2013թթ. 9 ամսում անշարժ գույքի նկատմամբ իրականացված գործարքներից ծագող իրավունքների պետական գրանցումների քանակական փոփոխումներն ըստ գործարքների ունեն հետևյալ բաշխվածությունը.

| Գործարքների տեսակները | 2012թ 9 ամիս | փոփոխություն | 2013թ. 9 ամիս |
|---|---|---|---|
| **ԱՌՈՒՎԱՃԱՌՔ** | 1248 | 21,3% | 1514 |
| **ՆՎԻՐԱՏՎՈՒԹՅՈՒՆ** | 465 | 25,8% | 585 |
| **ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅՈՒՆ** | 658 | 65,2% | 1087 |
| **ԳՐԱՎԱԴՐՈՒՄ** | 1108 | -19,7% | 890 |
| **ԺԱՌԱՆԳՈՒԹՅՈՒՆ** | 551 | 10,0% | 606 |
| **ՕԳՏԱԳՈՐԾՈՒՄ** | 43 | 60,5% | 69 |
| **ՍԵՓԱԿԱՆԱՇՆՈՐՀՈՒՄ** | 201 | -53,2% | 94 |
| **ՄԱՍՆԱՎՈՐԵՑՈՒՄ** | 40 | -45,0% | 22 |
| **ԱՌԱՋՆԱՅԻՆ ԳՐԱՆՑՈՒՄ** | 857 | -8,4% | 785 |
| **ՓՈԽԱՆԱԿՈՒԹՅՈՒՆ** | 38 | -57,9% | 16 |
| **ԿԱՌՈՒՑԱՊԱՏՈՒՄ** | 288 | -28,5% | 206 |
| **ԱՅԼ ԳՐԱՆՑՈՒՄ** | 869 | 12,9% | 981 |
| **ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ԴԱԴԱՐՈՒՄ** | 201 | 24,4% | 250 |
| **Ընդամենը** | **6567** | **8,2%** | **7105** |

2013թ. 9 ամսում հանրապետությունում ընդհանուր առմամբ իրականացվել է 1514 առուվաճառքի գործարքից ծագող իրավունքի պետական գրանցում, որոնց քանակը նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ

աճել է 21,3%-ով: Բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների նկատմամբ իրականացվել է 435, իսկ բնակելի տների նկատմամբ` 133 առուվաճառքի գործարքից ծագող իրավունքի պետական գրանցում:

| Հ/հ | Անշարժ գույքի տեսակները | Առուվաճառքի գործարքների քանակը | | |
|---|---|---|---|---|
| | | 2012թ. 9 ամիս | փոփոխություն | 2013թ. 9 ամիս |
| 1 | բազմաբնակարան շենքի բնակարան | 244 | 78,3% | 435 |
| 2 | առանձնատուն | 150 | -11,3% | 133 |
| 3 | արտադրական նշ. օբ. | 53 | -39,6% | 32 |
| 4 | հասարակական նշ. օբ. | 83 | 9,6% | 91 |
| 5 | ավտոտնակ | 21 | 5,3անգամ | 111 |
| 6 | հողամաս | 697 | 2,2% | 712 |
| | **Ընդամենը** | **1248** | **21,3%** | **1514** |

2012 և 2013թթ. 9 ամսում հանրապետության մի շարք քաղաքային համայնքներում վաճառված բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների և բնակելի տների առուվաճառքների գործարքների պայմանագրային գների և կոմիտեի կողմից իրականացված անշարժ գույքի շուկայի դիտարկումների արդյունքում ձևավորվել են հետևյալ շուկայական նվազագույն, առավելագույն և միջին գները ու նրանց փոփոխությունները:

### Բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարաններ

| Քաղաքներ | 2012թ. 9 ամիս<br>1 քմ արժեքը /ՀՀ դրամ/ | | | 2013թ. 9 ամիս<br>1 քմ արժեքը /ՀՀ դրամ/ | | | փոփոխությունը 2012թ. 9 ամսվա նկատմամբ |
|---|---|---|---|---|---|---|---|
| | նվազագույնը | առավելագույնը | միջինը | նվազագույնը | առավելագույնը | միջինը | |
| **Ստեփանակերտ** | 180 000 | 320 000 | **250 000** | 200 000 | 337 000 | **268 500** | **7,4%** |
| **Ասկերան** | 41 500 | 54 000 | **47 750** | 45 000 | 62 000 | **53 500** | **12,0%** |
| **Մարտունի** | 38 000 | 50 000 | **44 000** | 41 700 | 55 300 | **48 500** | **10,2%** |
| **Մարտակերտ** | 14 500 | 28 000 | **21 250** | 15 900 | 31 750 | **23 825** | **12,1%** |
| **Հադրութ** | 19 500 | 29 000 | **24 250** | 22 000 | 31 000 | **26 500** | **9,3%** |
| **Շուշի** | 43 000 | 88 000 | **65 500** | 55 000 | 98 500 | **76 750** | **17,1%** |

***Բնակելի տներ***

| ***Քաղաքներ*** | ***2012թ. 9 ամիս*** | | | ***2013թ. 9 ամիս*** | | | ***փոփոխումը 2012թ. 9 ամսվա նկատմամբ*** |
|---|---|---|---|---|---|---|---|
| | ***միջինը 200 քմ շինության և միջինը 1000քմ տնամերձով բնակելի տան արժեքը /ՀՀ դրամ/*** | | | ***միջինը 200 քմ շինության և միջինը 1000քմ տնամերձով բնակելի տան արժեքը /ՀՀ դրամ/*** | | | |
| | ***նվազագույնը*** | ***առավելագույնը*** | ***միջինը*** | ***նվազագույնը*** | ***առավելագույնը*** | ***միջինը*** | |
| ***Ստեփանակերտ*** | 22 000 000 | 37 000 000 | **29 500 000** | 25 500 000 | 40 200 000 | **32 850 000** | **11,4%** |
| ***Ասկերան*** | 4 100 000 | 4 700 000 | **4 400 000** | 4 450 000 | 5 330 000 | **4 890 000** | **11,1%** |
| ***Մարտունի*** | 3 350 000 | 4 200 000 | **3 775 000** | 3 500 000 | 4 670 000 | **4 085 000** | **8,2%** |
| ***Մարտակերտ*** | 1 650 000 | 2 850 000 | **2 250 000** | 1 800 000 | 3 125 000 | **2 462 000** | **9,4%** |
| ***Հադրութ*** | 1 500 000 | 2 800 000 | **2 150 000** | 1 550 000 | 2 960 000 | **2 255 000** | **4,9%** |
| ***Շուշի*** | 2 750 000 | 5 700 000 | **4 225 000** | 3 000 000 | 6 850 000 | **4 925 000** | **16,6%** |

2013թ-ի 9 ամսում հանրապետությունում իրականացվել է 1087 վարձակալության գործարքից ծագող իրավունքի պետական գրանցում, որոնց քանակը նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ աճել է 65,2%-ով:

Վարձակալության գործարքների քանակների փոփոխումներն ըստ Ստեփանակերտ քաղաքի և հանրապետության շրջանների 2012 և 2013թթ. 9 ամսում ունեն հետևյալ բաշխվածությունը.

| | ***2012թ 9 ամիս*** | ***փոփոխություն*** | ***2013թ. 9 ամիս*** |
|---|---|---|---|
| ***Ստեփանակերտ*** | 66 | *-21,2%* | 52 |
| ***Ասկերան*** | 111 | *2,1անգամ* | 236 |
| ***Մարտունի*** | 271 | *1,8%* | 276 |
| ***Մարտակերտ*** | 33 | *2,2անգամ* | 73 |
| ***Հադրութ*** | 65 | *3,7անգամ* | 241 |
| ***Շուշի*** | 10 | *-60,0%* | 4 |
| ***Քաշաթաղ*** | 101 | *85,1%* | 187 |
| ***Շահումյան*** | 1 | *18,0անգամ* | 18 |
| ***Հանրապետություն*** | **658** | ***65,2%*** | **1087** |

2013թ-ի 9 ամսում հանրապետությունում կատարվել է 11 085,2335 հա ընդհանուր մակերեսով, գյուղատնտեսական նշանակության հողամասերի

նկատմամբ վարձակալության 962 գործարքից ծագող իրավունքի պետական գրանցում, որոնց քանակը և մակերեսներն ըստ հանրապետության շրջանների, ունեն հետևյալ բաշխվածությունը.

| | ***2013թ-ի 9 ամսում վարձակալված հողամասերը*** | |
|---|---|---|
| | ***քանակը*** | ***քանակը*** |
| ***Ասկերան*** | 222 | 898,921 |
| ***Մարտունի*** | 255 | 1 296,6 |
| ***Մարտակերտ*** | 54 | 557,06 |
| ***Հադրութ*** | 238 | 2 718,15 |
| ***Շուշի*** | 1 | 2,2425 |
| ***Շահումյան*** | 10 | 83,7 |
| ***Քաշաթաղ*** | 182 | 5 529,18 |
| ***Հանրապետություն*** | ***962*** | ***11 085,2335*** |

Հանրապետությունում անշարժ գույքի շուկայի դիտարկումները ցույց են տալիս, որ հանրապետությունում վարձակալության համար, որպես ակտիվ անշարժ գույքի տեսակներ են հանդիսանում` Ստեփանակերտում հասարակական նշանակության օբյեկտները, իսկ շրջաններում գյուղատնտեսական նշանակության հողամասերը:

2013թ-ի 9 ամսում հանրապետությունում իրականացվել է 890 գրավադրման գործարքից ծագող իրավունքի պետական գրանցում, որը նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ նվազել է 19,7 %-ով:

2012 և 2013 թթ. 9 ամսում գրավադրման գործարքների քանակների փոփոխություններն ըստ Ստեփանակերտ քաղաքի և հանրապետության շրջանների ունեն հետևյալ բաշխվածությունը.

| | ***2012թ 9 ամիս*** | ***փոփոխություն*** | ***2013թ. 9 ամիս*** |
|---|---|---|---|
| ***Ստեփանակերտ*** | *618* | *5,3%* | *651* |
| ***Ասկերան*** | *134* | *-51,5%* | *65* |
| ***Մարտունի*** | *169* | *-64,5%* | *60* |
| ***Մարտակերտ*** | *76* | *-36,8%* | *48* |
| ***Հադրութ*** | *45* | *-46,7%* | *24* |
| ***Շուշի*** | *56* | *-37,5%* | *35* |
| ***Քաշաթաղ*** | *10* | *-30,0%* | *7* |
| ***Շահումյան*** | *0* | *0,0%* | *0* |
| ***Հանրապետություն*** | ***1108*** | ***-19,7%*** | ***890*** |

2013թ-ի 9 ամսում հանրապետությունում իրականացվել է 116 սեփականաշնորհման և մասնավորեցման գործարքից ծագող իրավունքի

պետական գրանցում, որոնց քանակը նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ նվազել է` 51,9%-ով:

Սեփականաշնորհման և մասնավորեցման գործարքների քանակների փոփոխումներն ըստ Ստեփանակերտ քաղաքի և հանրապետության շրջանների 2012և 2013թ. 9 ամսում ունեն հետևյալ բաշխվածությունը.

| | *2012թ 9 ամիս* | *փոփոխություն* | *2013թ. 9 ամիս* |
|---|---|---|---|
| ***Ստեփանակերտ*** | *184* | *-54,9%* | *83* |
| ***Ասկերան*** | *9* | *-22,2%* | *7* |
| ***Մարտունի*** | *12* | *-83,3%* | *2* |
| ***Մարտակերտ*** | *13* | *23,1%* | *16* |
| ***Հադրութ*** | *4* | *0,0%* | *4* |
| ***Շուշի*** | *18* | *-83,3%* | *3* |
| ***Քաշաթաղ*** | *1* | *0,0%* | *1* |
| ***Շահումյան*** | *0* | *0,0%* | *0* |
| ***Հանրապետություն*** | ***241*** | ***-51,9%*** | ***116*** |

## ԼՂՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆՆ ԱՌԸՆԹԵՐ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ԿԱԴԱՍՏՐԻ ՊԵՏԱԿԱՆ ԿՈՄԻՏԵ

**Կադաստրային գնահատման և համակարգված դիտարկումների բաժին** ՀԵՌ: 95-17- 49